ԿԱՐԾԻՔ

Նաղդալյան Միեր Կարենի

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԺԹ.00.04 - «Կլինիկական, հատուկ հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից կլինիկական հոգեբանության և հոգեբուժության արդի խնդիրներից է բարձր ինտենսիվության սթրեսի ազդեցությամբ առաջացած հոգեկան խանգարումների ուսումնասիրությունը, ներառյալ մարտական սթրեսը և մարտական հոգեկան տրավմայի հետևանքները՝ բավականին տարածված պաթոլոգիա, որն ունի աճելու միտում, մոլորակի տարբեր շրջաններում լոկալ զինված հակամարտությունների և պատերազմների թվի աճի պատճառով: Մարտական հոգեկան տրավմայի բժշկական, հոգեբանական և սոցիալական հատուկ նշանակությունը որոշվում է դրա երկարաժամկետ հետևանքների տարածվածությամբ, որոնք կարող են տարբերվել ինչպես կլինիկական դրսևորումներով, այնպես էլ ծանրությամբ, սակայն միշտ ունենում են երկար և, որպես կանոն, քրոնիկ ընթացք: Միևնույն ժամանակ, ՀՏՍԽ-ի նույնիսկ առանձին ախտանիշների առկայությունը կարող է հանգեցնել խաղաղ ժամանակ սոցիալական հարմարվողականության զգալի նվազմանը, կյանքի զգալի բացասական փոփոխություններին՝ աշխատանքի, ընտանիքի կորուստ, ուրիշների հետ հարաբերությունների վատթարացում, ալկոհոլիզմ և այլն:

Չնայած մարտական հոգեկան տրավմայի խնդրի վերաբերյալ մեծ թվով ուսումնասիրություններին, այնուամենայնիվ տրավման, և հատկապես հետպատերազմական սթրեսային խանգարումը շարունակում է մնալ կլինիկական հոգեբանության և համաշխարհային հոգեբուժության արդիական խնդիրներից մեկն իր գիտական, կիրառական, համաճարակաբանական նշանակությամբ և մի շարք այլ ասպեկտներով:

Մինչ օրս չկան հստակ հայեցակարգեր, որոնք կհիմնավորեն հետտրավմային սթրեսային խանգարումների (ՀՏՍԽ) զարգացման հոգեբանական և կենսաբանական մեխանիզմների ուսումնասիրության մոտեցումները: Այս խանգարման զարգացման մի քանի պաթոգենետիկ մոդելներ են մշակվում՝ կենսաբանական, հոգեդինամիկ, ճանաչողական և հոգեսոցիալական: Ատենախոսության հեղինակը փորձել է ժամանակի հեռանկարի հետաքրքիր անկյան տակ դիտարկել հետտրավմային սթրեսային խանգարման հիմնախնդիրը:

Վերջին տասնամյակների ընթացքում անձի ժամանակի հեռանկարի ուսումնասիրությանը նվիրված հետազոտությունների թիվը նկատելիորեն աճել է այս թեմայի բարձր արդիականության պատճառով: Ժամանակի և ժամանակի մեջ մարդու գոյության խնդիրը փիլիսոփայության և հոգեբանության մեջ իր զարգացման բավականին երկար պատմությունն ունի: Սկսած ժամանակի Կանտյան մեկնաբանությունից՝ որպես մարդկային փորձի կազմակերպման apriori ձև, տևականության վերապրման Ա. Բերգսոնի ուսումնասիրություններից, ժամանակի ներքին գիտակցության Է. Հուսերլի

ուսումնասիրություններից, ժամանակը դարձել է Մ.Հայդեգերի, Ժ.Պ Սարտրի էքզիստենցիալ փիլիսոփայության կարևոր թեմաներից մեկը: Հետագայում ժամանակի ընկալման և ժամանակի հեռանկարի հիմնախնդիրները արտացոլվեցին այնպիսի հեղինակների աշխատություններում, ինչպիսիք են Կ. Լևինը, Լ. Ֆրենկը, Ֆ. Զիմբարդոն, Ջ. Նյուտենը, Է.Ի. Գոլովախան, Ա.Ա. Կրոնիկը, Կ.Ա. Աբուլխանովան, Տ.Ն. Բերեզինան և այլոք: Ժամանակի ընկալումը, ժամանակային ընդմիջումների վերապրման առանձնահատկությունները, վերաբերմունքը անցյալին, ներկային կամ ապագային - այս հարցերը գիտնականների կողմից բարձրացվել են դեռ անտիկ ժամանակներից, բայց դեռևս կա անհրաժեշտություն առավել խորքային ուսումնասիրելու այն կլինիկական հոգեբանության տեսանկյունից:

Տարբեր հոգեկան խանգարումների բուժման համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունի ժամանակի հեռանկարի ուսումնասիրությունը: Քանի որ անհատական ժամանակի ընկալումը, ուղղվածությունը, ըստ երևույթին, կարելի է վերագրել հոգեկանի տարածական-ժամանակային կազմակերպման օրինաչափություններին (Vekker, L.M.), այդ մեխանիզմների ըմբռնումը հնարավորություն կտա ավելի արդյունավետ կերպով կազմակերպել թերապևտիկ և վերականգնողական գործընթացները հոգեկան առողջության բնագավառում: Հայտնի է, որ սեփական անցյալի, ներկայի և ապագայի նկատմամբ հուզական վերաբերմունքը նույնը չէ տարբեր հոգեկան խանգարումների ժամանակ:

Մեր ուշադրությանը ներկայացված ատենախոսությունը ոչ միայն կարևորում է մարտական գործողությունների մասնակիցների շրջանում ՀՏՍԽ ախտանիշների առկայության պարագայում ժամանակային հեռանկարների, այլև անձնային առանձնահատկությունների դրսևորման օրինաչափությունները և դերը: ՀՏՍԽ կոգնիտիվ տեսությունները ենթադրում են, որ անցյալի բացասական համոզմունքները, այդ թվում՝ նաև բացասական անցյալի ժամանակային հեռանկարը, գործոններ են, որոնք ամրապանդում են ՀՏՍԽ ախտանիշները (Ehlers, A., & Clark, D. M. (2000): Հեղինակը հիմք վերցնելով իրականացված սակավաթիվ հետազոտությունները, որոնք հաստատում են, որ պատերազմի վետերանների մոտ անցյալի փորձի և նեգատիվ կամ կարճաժամկետ թվացող ապագայի փոխկապակցվածության բարդությունները կորելացվում են ՀՏՍԽ ախտանիշների բարձր մակարդակի հետ (Brown, A. D., Root, J. C., Romano, T. A., Chang, L. J., Bryant, R. A., & Hirst, W. (2013)), իսկ ճանապարհային պատահարների մասնակիցներից և փախստականներից կազմված հետազոտական խմբերում ՀՏՍԽ ախտանիշները ուղիղ կախվածության մեջ են բացասական անցյալի և ֆատալիստական ներկայի ժամանակային հեռանկարներից (Papastamatelou, J., Unger, A., & Zachariadis, A. (2021); Stolarski, M., Fieulaine, N., & Zimbardo, P. G. (2018)), փորձել է երևույթի ավելի մանրամասն ուսումնասիրություն կատարել և հարստացնել ժամանակային հեռանկարի մասին բժշկահոգեբանական տեսական գիտելիքները: Այս հետազոտության մեջ հեղինակը «դուրս է գալիս» այս հեղինակների նշված սահմաններից և փորձում ՀՏՍԽ ախտանշանների ձևավորումը կապել ավելի նուրբ, կլինիցիստի աչկին անտեսանելի մակարդակի ժամանակային հեռանկարի այնպիսի տեսակների հետ, ինչպիսիք են նեգատիվ անցյալը, հեդոնիստական և ֆատալիստական ներկան, ինչպես նաև անձնային առանձնահատկությունների արտահայտվածության մակարդակի և այնպիսի տիպերի

հետ, ինչպիսիք են պարանոյալությունը, շիզոիդությունը, հիպոխոնդրիան, դեպրեսիան և հիպոմանիան:

Ատենախոսը նպատակ է դրել ուսումնասիրել ժամանակային հեռանկարների և անձնային առանձնահատկությունների դրսևորման օրինաչափությունները և փոխկապակցվածությունը մարտական գործողությունների մասնակիցների շրջանում և ՀՏՍԽ ախտանիշների առկայության պարագայում: Հարկ է նշել, որ կլինիկական հոգեբանության բնագավառում բավարար չեն ուսումնասիրված այս բնութագրերի մեջ առկա կապերը, փոխպայմանավորվածությունը: Իրականացված հետազոտության արդյունքում, կորելյացիոն և այլ վիճակագրական վերլուծությունների հիման վրա հեղինակը ստացել է շոշափելի և հավաստի արդյունքներ, որոնք հիմնավորում են առանձին չափանիշների և բաղադրիչների միջև փոխկապակցվածությունը:

Մեր Նաղդալյանի կողմից իրականացված հետազոտական աշխատանքը հնարավորություն է տալիս ընդլայնել և հարստացնել ժամանակային հեռանկարի հոգեբանական նշանակության մասին պատկերացումները և, այդպիսով, իր ներդրումն ունենալ առկա տեսական հիմքերի ամբողջականացման գործում, քանի որ ժամանակային հեռանկարն առաջին անգամ դիտարկվում է անձնային առանձնահատկությունների հետ միասին և մարտական գործողությունների մասնակցության համատեքստում: Ինչը անխուսափելիորեն կնպաստի մարտական գործողությունների մասնակից անձանց հետ աշխատանքում հոգեթերապևտիկ արդյունավետ մարտավարությունների կատարելագործմանը, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական աջակցության կազմակերպմանը և համակարգայնացմանը:

Ելնելով իր առջև դրված բավականաչափ հստակ և գրագետ ձևակերպված խնդիրներից, հեղինակը ընտրել է հետազոտության գիտականորեն հաստատված և հուսալի մեթոդական գործիքակազմ, այն է «Առաջնային օգնության ՀՏՍԽ սքրինինգ թեստը՝ ըստ DSM-5-ի» հարցարանը (PC-PTSD-5) հետազոտվողների մոտ ՀՏՍԽ ախտանիշների մակարդակի բացահայտման համար, Զիմբարդոյի և գործընկերների մշակած «Ժամանակային հեռանկարի հարցարանը» (ZTPI) ընտրվել է ժամանակային հեռանկարների հասկացման համար, իսկ անձնային գծերի և հոգեպաթոլոգիաների բացահայտման համար օգտագործվել է «Մինեսոտայի բազմափուլ անձնային հարցարանի» (MMPI) սեղմ տարբերակը՝ «Մինի մուլտը»: Տվյալների վերամշակման և տարբեր խմբերում ստացված միջին արդյունքների համեմատության դեպքում հավաստիության ապահովման, նաև կորելյացիոն վերլուծությունների նպատակով, կիրառել մի շարք վիճակագրական վերլուծության մեթոդներ:

Ընտրված մեթոդական գործիքակազմի և ծավալված հետազոտական արդյունքում ատենախոսը կարողացել է ապացուցել իր կողմից առաջ քաշված վարկածը, որը ենթադրում է, որ մարտական գործողությունների մասնակիցների շրջանում «բացասական» ժամանակային հեռանկարների և որոշ անձնային գծերի արտահայտվածության մակարդակը բարձր է նույնիսկ հետտրավմատիկ սթրեսային խանգարման բացակայության պարագայում, այնուհանդերձ, ՀՏՍԽ ախտանիշների բարձր մակարդակը ունի ավելի ուժեղ ազդեցություն նեգատիվ անցյալի, հեդոնիստական և ֆատալիստական ներկայի ժամանակային հեռանկարների և հիպոմանիայի, դեպրեսիայի ու պարանոյալության անձնային գծերի վրա, քան մասնակցության փաստը:

Հեղինակը կարողացել է հիմնավորել ատենախոսության գիտական նորույթը, որը միանշանակ համալրում է կլինիկական հոգեբանական էմպիրիկ մոտեցումները ՀՏՍԽ վերաբերյալ: Առաջին անգամ իրականացվել է մարտական գործողությունների մասնակից անձանց շրջանում ժամանակային հեռանկարների ուսումնասիրմանն ուղղված հետազոտություն և ինչպես նաև անձնային գծերի հետ դրանց փոխկապակցվածությունների բացահայտում: Անդրադարձ է կատարվել մարտական գործողությունների մասնակից անձանց շրջանում, անկախ ՀՏՍԽ ախտանիշների առկայությունից, «բացասական» և «դրական» ԺՀ-ների արտահայտվածության ցուցանիշներ տարբերությանը:

Ատենախոսությունն ամբողջական է, կառուցված գրագետ, ներառելով ներածությունը, չորս գլուխները, եզրակացությունը, առաջարկները, գրականության ցանկը և հավելվածը:

Հիմնվելով տեսական բազմակողմանի վերլուծությունների, ինչպես նաև կազմակերպված և իրականացված համապարփակ հետազոտության արդյունքում հեղինակը հանգել է մի շարք կարևոր եզրահանգումների: Նա ապացուցել է, որ փորձարարական խմբում ավելի բարձր են նեգատիվ անցյալի, հեդոնիստական ներկայի և ֆատալիստական ներկայի ժամանակային հեռանկարների ցուցանիշները, իսկ պոզիտիվ անցյալի արտահայտվածությունը ավելի բարձր է ստուգիչ խմբի մոտ: Ատենախոսության հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ ՀՏՍԽ ախտանիշների բարձր մակարդակով անձանց շրջանում նեգատիվ անցյալի, հեդոնիստական ներկայի և ֆատալիստական ներկայի ժամանակային հեռանկաների ցուցանիշները ավելի բարձր են, ինչը բացատրվում է տրավմատիկ իրադարձության առաջացրած հոգեկան փոփոխություններով, որոնցից առաջինը հենց ժամանակային կոնտիննումի խախտումն է անձի հոգեկան աշխարհում:

Ատենախոսի կողմից վեր է հանված ՀՏՍԽ ախտանիշների բարձր մակարդակի և դեպրեսիայի, շիզոիդության, պարանոյալության և հիպոմանիայի ցուցանիշների կապը, ինչը ցույց է տալիս, որ տրավմատիկ ազդեցությունն ու ՀՏՍԽ-ը էականորեն բարձրացնում են անձնային առանձնահատկությունների արտահայտվածության մակարդակը: Այս երևույթի հիմքում ընկած է տրավմատիկ իրադարձության կողմից օրգանիզմի մարմնական և հոգեկան ռեսուրսների ակտիվացումը, ինչը հանգեցնում է անձնային առանձնահատկությունների բևեռացման:

Ատենախոսական հետազոտության արդյունքում պարզ է դարձել այն կարևոր հիմնադրույթը, որ ժամանակային հեռանկարների և անձնային գծերի միջև վիճակագրական համեմատությունները ցույց են տալիս, որ նեգատիվ անցյալի և ֆատալիստական ներկայի ԺՀ-ները ուղիղ կորելյացիայի մեջ են գտնվում հիպոխոնդրիայի, դեպրեսիայի, պարանոյալության, շիզոիդության և հիպոմանիայի ցուցանիշների հետ և՛ փորձարարական, և՛ ստուգիչ խմբերի մոտ, սակայն մասնակցած անձանց խմբում գործակիցները ավելի բարձր են: Սա բացահայտում է նոր կորելյացիաներ՝ կապված շիզոիդության և հիպոմանիայի հետ: Հիպոմանիայի բարձր արդյունքներից կարելի է ենթադրել, որ տրավմաների դեպքում ակտիվանում են հոգեբանական գերփոխհատուցման մեխանիզմները:

Ուսումնասիրելով ՀՏՍԽ ախտանիշներ ունեցող անձանց շրջանում ֆատալիստական ներկան և նեգատիվ անցյալը, բացահայտվեց ուղիղ կորելյացիոն կապ պարանոյալության, շիզոիդության և հիպոմանիայի ցուցանիշների հետ: Հեղինակը բացատրում է այդ կապը այն փաստով, որ մարտական գործողությունների մասնակից անձը կարծես «դուրս է մնում ժամանակի բնականոն ընթացքից», և առաջանում է վարքային նոր քոփինգների ստեղծման կարիք, որոնք կլինեն ավելի հարմարեցված առկա հոգեբանական վիճակի համար:

Այնուամենայնիվ, կցանկանայինք նշել նաև որոշ դիտողություններ:

1. Կարծում ենք, որ նպատակահարմար կլիներ, եթե գրականության վերլուծության մեջ անդրադարձ կատարվեր ՀՏՍԽ ունեցող անձանց շրջանում անձնային առանձնահատկությունների արտահայտվածությունների վերաբերյալ առկա ժամանակակից հետազոտությունների մասին:
2. Աշխատանքը առավել շահեկան կլիներ, եթե հետազոտությունների արդյունքները ներկայացվեին նաև ըստ տարիքային շրջաբաժանման, քանի որ 18-52 տարեկան տարիքային շրջանը բավական ընդգրկուն է և հետաքրքրական կլիներ ուսումնասիրել ՀՏՍԽ ախտանիքշներով անձանց ժամանակային հեռանկարներն ինչպիսի առանձնահատկություններ ունեն հետազոտվողների տարբեր տարիքային խմբերում:
3. Ատենախոսը կատարած հետազոտության վերջնարդյունքում առաջարկում է թիրախային թերապևտիկ և ախտորոշիչ ծրագրերի կիրառում, որոնք կնպաստեն տարանջատել տրավմային նախորդող և հաջորդող հոգեբանական և հոգեկան խնդիրների սպեկտրումը՝ նվազեցնելով հոգեթերապևտիկ կուրսի տևողությունը և բարձրացնելով դրա արդյունավետությունը: Աշխատանքը առավել կհարստանար, եթե հեղինակի կողմից ներկայացվեր որևէ կոնկրետ գործնական առաջարկ-ծրագիր:

Սակայն հարկ ենք համարում ընդգծել, որ վերոնշյալ դիտողությունները բոլորովին չեն արժեզրկում նրա գիտական արժեքը, քանի որ Միեր Կարենի Նաղդալյանի ատենախոսությունը կատարված է մեծ խնամքով և իրենից ներկայացնում է լիարժեք ավարտուն հետազոտական աշխատանք, կատարած պատշաճ գիտական մակարդակով: Ստացված գիտական դրույթներն ու եզրակացությունները միանգամայն հիմնավորված են, ճշգրիտ և արդի: Նրանք ամբողջովին բխում են հայցորդի հետազոտություններից:

Արդյունքները կարող են կիրառվել կլինիկական հոգեբանության ոլորտում որպես թերապևտիկ գործիք, և զգալիորեն նպաստել ՀՏՍԽ ունեցող անձանց վերականգնողական և թերապևտիկ աշխատանքներին: Ատենախոսության հեղինակը կարողացել է ցույց տալ, որ կարող է մշակել մասնագիտական գրականությունը, հետազոտություններ իրականացնել և վերլուծել ստացված արդյունքները վիճակագրական ժամանակակից մեթոդների կիրառմամբ: Աշխատանքի տեսական և մեթոդական մակարդակը վկայում են թե հեղինակի գիտական հասունության, թե ատենախոսության գիտագործնական արժեքի մասին:

Միեր Կարենի Նաղդալյանի «Ժամանակային հեռանկարի առանձնահատկությունները մարտական գործողությունների մասնակիցների շրջանում»

թեմայով ատենախոսությունն իր կառուցվածքով, բովանդակությամբ համապատասխանում է ԲՈԿ-ի՝ ԺԹ.00.04. թվանիշով՝ «Կլինիկական, հատուկ հոգեբանություն» մասնագիտությանը: Այն իր գիտականությամբ համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող բոլոր պահանջներին, իսկ հեղինակը արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Մ.Հերացու անվ. ԵՊԲՀ,
բժշկական հոգեբանության ամբիոնի դասախոս,
հոգ.գիտ.թեկնածու Ա.Հ.Տեր-Ստեփանյան

Ա.Հ.Տեր-Ստեփանյանի ստորագրությունը
Հաստատում եմ՝

ԵՊԲՀ գիտքարտուղար
բ.գ.դ, պրոֆեսոր Տ.Գ.Ավագյան
30.08.2023 թ.